

L.H. AGHAJANYAN, L.H. KHACHATRYAN, L.L. AGHAJANYAN,
A.L. AGHAJANYAN

**PRIORITIES OF INDUSTRY DEVELOPMENT IN THE REPUBLIC OF
ARMENIA**

The importance and priority of industry in the country economic development are considered. The basic directions and activities that can contribute to the sustainable and integrated development of industry in the Republic of Armenia are discussed and substantiated.

Keywords: industry, development, priority, resources, economic indicators, modern technologies.

ՀՏԴ 334.012.3

Ա.Ս. ՄԱԴՈՅԱՆ, Ա.Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

**«ԱՐԴՎԻՆ» ԲԲԸ-Ի ԱՐՏԱԴՐԱԾ ՍԻՆՔՐՈՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՀՀ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(Վանաձոր)**

Ներկայացված է «Արդվին» ԲԲԸ-ում արտադրված սինքրոն էլեկտրոշարժիչների պահանջարկի հետազոտումը ՀՀ ջերմոցային տնտեսություններում, որոնք նախատեսված են օդափոխության համակարգում օգտագործելու համար: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Արդվին» ԲԲԸ-ի արտադրանքը պահանջված է Հայաստանի շուկայում, և առաջարկվել են ուղիներ շուկա մուտք գործելու համար:

Առանցքային բաներ. սինքրոն էլեկտրաշարժիչ, ջերմոց, շուկայի ուսումնասիրություն, 7P մոդել, պահանջարկ, գին:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության տնտեսական գործունեության բարենպաստ իրականացման գրավականներից է գրագետ մարքեթինգային քաղաքականության վարումը, որի բաղկացուցիչ մասերն են ապրանքային քաղաքականության մշակումն ու իրացման արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև շուկայական մրցակցության պայմաններին ճկուն հարմարվողականությունը [1]:

Նշված նպատակներն իրականացնելու համար դիտարկել ենք Արմավիրի մարզի ջերմոցային տնտեսությունները և փորձել ենք կատարել «Արդվին» ԲԲԸ-ում արտադրված էլեկտրաշարժիչների մարքեթինգային հետազոտություն:

«Արդվին» ԲԲԸ-ն առաջարկում է ՀՀ շուկային և սպառողներին մինչև 240 Վտ հզորությամբ միաֆազ և եռաֆազ սինքրոն էլեկտրաշարժիչներ: Դրանք իրենց տեխնիկական տվյալներով եզակի են ՀՀ շուկայում: Այդպիսի էլեկտրաշարժիչն առանձնանում է հետևյալ հիմնական առավելություններով.

- ✓ ռոտորը ներկայացնում է հաստատուն մագնիս,
- ✓ տալիս է հնարավորություն՝ ստանալու ռեակտիվ էներգիայի օպտիմալ ռեժիմ, որն իրականացվում է հոսանքի ավտոմատ կարգավորման միջոցով,
- ✓ ավելի քիչ զգայուն է լարման տատանումների նկատմամբ,
- ✓ կարողանում է աշխատել մեծ ծանրաբեռնվածությամբ,
- ✓ շարժիչի պտտման արագությունը հաստատուն է մնում ցանկացած ծանրաբեռնվածության պայմաններում:

Էլեկտրաշարժիչի որակը երաշխավորվում է, քանի որ յուրաքանչյուր էլեկտրաշարժիչ անցնում է փորձաքննություն սպառողին ներկայացվելուց առաջ (նկ.1):



Նկ. 1. Էլեկտրաշարժիչի որակը ստուգող սարք

Այսօր ընկերության արտադրանքը վաճառվում է միայն ռուսական շուկայում: Ընկերության գնորդներն են «Электропривод» առևտրաարտադրական ձեռնարկությունը և «Промпривод ԲԲԸ (քաղաք Չերոկսարի) ընկերությունները: Նրանք արտադրանքի իրացման համար իրականացնում են ինտերնետ մարքեթինգ (<http://mehanizmy.ru>) և «Արդվին» ԲԲԸ – ի արտադրանքը վաճառում են կայքի միջոցով: Եթե «Արդվին» ԲԲԸ-ն ունենա սեփական ինտերնետային կայք, նա կկարողանա իր արտադրանքը ինքնուրույն, առանց միջնորդի, ներկայացնել և՛ միջազգային շուկայում, և՛ տեղական շուկայում, որի արդյունքում, կախված գնից, կավելանան ընկերության վաճառքի ծավալները, քանի որ միջնորդ ընկերությունները այն վաճառում են ձեռքբերման գնից մոտ 3 անգամ ավել, իսկ բացի ՌԴ շուկայից, Արդվին ԲԲԸ – ն երեբևիցե չի փորձել մուտք գործել այլ շուկաներ:

Այս աշխատանքի շրջանակներում ներկայացված է արտադրանքի անհրաժեշտությունը ՀՀ ջերմոցային տնտեսություններում, որտեղ դրանք կազմում են ավտոմատ օդափոխության համակարգի մաս:

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է: Գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերը կազմում են ՀՀ հողային ֆոնդի 46,8 %-ը (մոտ 1391,9 հազ. հա), որից 770 հա-ը ջերմոցային տնտեսություններն են: Սակայն դրանց միայն 20 %-ն է հագեցած ժամանակակից տեխնոլոգիաներով [2]:

Ի տարբերություն գյուղատնտեսության մյուս ճյուղերի՝ ջերմոցների պարագայում բնակլիմայական պայմանների դիսկերը, մասնավորապես՝ կարկուտը, ցրտահարությունը, որպես սպառնալիք իսպառ, բացակայում են: Բացի այդ, ՀՀ-ում ջերմոցների աշխատանքն ավելի արդյունավետ է, քանի որ բարձր լեռնային գոտի է, և բնակլիմայական պայմաններն էլ համապատասխան են: Հայաստանում այսօր բուռն զարգացում է ապրում ջերմոցային տնտեսության ոլորտը [3]:


Օդափոխությունը կարևոր դեր է խաղում ջերմատանը տեղադրված մշակաբույսերի վեգետացիոն պրոցեսների բնականոն ընթացքի համար, քանի որ նրանց աճի և բավարար բերքատվության համար անհրաժեշտ է ինչպես թթվածին, այնպես էլ ածխաթթու գազ: Ջերմատան օդափոխությունը սերտորեն կապված է կլիմայական պայմանների և գիշերվա ու ցերեկվա ջերմաստիճանային տատանումների հետ: Այս տատանումները կարող են փոփոխել ջերմատան միկրոկլիման, ինչը կարող է ազդել մշակաբույսերի գոյության, ձևի և բերքատվության վրա: Մշակաբույսերի բնականոն աճի համար անհրաժեշտ է ջերմատանն ապահովել համապատասխան ջերմային և օդի հարաբերական խոնավության ռեժիմ [3]:

Ջերմոցներում օդափոխությունը կարելի է իրականացնել բնական, ավտոմատ և համալիր մեթոդներով: Սակայն օդափոխության բնական մեթոդները չեն բավարարում ջերմոցներում պատշաճ կլիմայական պայմաններ ապահովելու և միկրոկլիման կարգավորելու համար: Իսկ օդափոխության ավտոմատ մեթոդի և ջերմաստիճանի տվիչների կիրառումը ջերմոցներում բարձրացնում է արտադրողականությունը, ապահովելով ճիշտ ժամանակին բույսերի աճի համար անհրաժեշտ թթվածին և ածխաթթու գազ:

Ուսումնասիրության համար ընտրվել են Արմավիրի մարզի ջերմոցային տնտեսությունները, որոնք կազմում են մոտ 280 հա:

Նկ. 2-ում պատկերված է Արմավիրի մարզի ջերմատների քանակն ըստ շինանյութի տեսակի [4]:

■ ապակյա ■ պոլիէթիլենային թաղանթ ■ պոլիկարբոնատային



Նկ. 2. Ջերմաստիճանի քանակները՝ ըստ շինանյութի տեսակի

Ինչպես երևում է գծապատկերից, մարզում գերակշռող մաս են կազմում պոլիէթիլենային թաղանթով պատրաստված ջերմատները: Դրանց ծառայության ժամկետները տատանվում են 2-ից մինչև 8 տարի ժամկետներում: Շինանյութի այս տեսակով պատրաստված ջերմատների համար օդափոխությունը շատ կարևոր է ոչ միայն բույսերի աճի, այլ նաև թաղանթի որակի պահպանման տեսանկյունից, հակառակ դեպքում այն տաքությունից կորակազրկվի: Այսպիսով, ավտոմատ օդափոխության համակարգի և ջերմաստիճանային տվիչների առկայությունը կապահովի ճիշտ ժամանակին օդափոխության կատարումը, ինչպես նաև կերկարացնի թաղանթների ծառայության ժամկետները [5]:

Մարզի ջերմոցային տնտեսությունների մոտ կեսն ունի 700ք.մ.-ից փոքր մակերես, իսկ մեկ ջերմատան միջին մակերեսը կազմում է միջինը 630ք.մ.: Կոպիտ հաշվարկով, եթե այս բոլոր տնտեսությունները հագեցված լինեին ավտոմատ օդափոխության համակարգով (200ք.մ.-ին 1 էլեկտրաշարժիչ), ապա տնտեսություններում էլեկտրաշարժիչների թիվը կհասներ մոտ 14.000-ի: Սակայն, ըստ մեր հարցումների տվյալների, որոնք անց են կացվել Արմավիրի մարզի շրջանակներում, տնտեսությունների միայն 26%-ն է հագեցած ավտոմատ օդափոխության համակարգով (առկա է մոտ 3.640 շարժիչ), որոնց 66,6%-ը վերանորոգման խնդիրներ ունի՝ առաջացած տարիների ընթացքում: Այսպիսով, Արմավիրի մարզի ջերմոցային տնտեսություններում մոտ 10.360 հատ էլեկտրաշարժիչի պահանջարկ կա:

Հետազոտությունից պարզ դարձավ նաև, որ ջերմոցային տնտեսությունների տերերի մոտ 80%-ը բավարար գիտելիքներ չունի օդափոխության ավտոմատ համակարգի արդյունավետության մասին, որոնց մոտ 75 %-ը, իմանալով, որ իրենց բերքատվությունը կբարձրանա, ցանկություն հայտնեցին առաջիկա ժամանակներս իրենց ջերմոցի օդափոխությունը դարձնել ավելի ժամանակակից:

Այսինքն, ավելի կոնկրետ, շարժիչների պահանջարկը Արմավիրի մարզի ջերմոցային տնտեսություններում կկազմի մոտ 7.770 հատ:

Հարցվածները հիմնականում դժգոհում են արտադրանքի բարձր ինքնարժեքից, որի պատճառով ապրանքը շուկայում մրցունակ չէ: Կատարված հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում, որ դա հետևանք է այն բանի, որ այդ ջերմոցներում նորագույն տեխնոլոգիաներ չեն կիրառվում, ինչի հետևանքով արտադրողականությունը ցածր է, իսկ գործընթացը՝ ծախսատար: Իսկ «Արդվին» ԲԲԸ-ի արտադրանքին հարցվածներից որևէ մեկը ծանոթ չէր:

Այսպիսով, ջերմոցներում օդափոխության ավտոմատ համակարգի կիրառումը կլուծի բազմաթիվ խնդիրներ.

1. կիջեցնի արտադրանքի ինքնարժեքը՝ 1քմ. տարածքից ստացվող բերքի ավելացման հաշվին,

2. կիջեցնի այլ երկրներից, մասնավորապես՝ Թուրքիայից ներկրվող բանջարեղենի տոկոսային ցուցանիշը, որը վերջին տարիներին մեծ թիվ է կազմում,

3. արտադրանքը կդարձնի մրցունակ թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում,

4. կբավարարի ԱՊՀ երկրների ջերմոցային արտադրանքի պահանջարկը:

Ուսումնասիրելով ՀՀ ջերմոցային տնտեսությունները, հանգեցինք այն եզրակացության, որ «Արդվին» ԲԲԸ-ի արտադրած էլեկտրաշարժիչները պահանջարկ ունեն շուկայի տվյալ հատվածում:

Ներկայացնենք մեր ուսումնասիրության արդյունքները և առաջարկները մարքեթինգի 7P մոդելի միջոցով.

✓ Արտադրանքն իր տեխնիկական տվյալներով միակն է ՀՀ շուկայում:

✓ «Արդվին» ԲԲԸ-ին առաջարկում ենք նվազեցնել ծախսերը՝ կիրառելով արևային էներգիա կլանող սարքեր:

✓ Առաջարկում ենք արտադրանքի վաճառքի խթանման նպատակով իրականացնել ինտերնետ մարքեթինգ:

✓ Այսօր արտադրանքը վաճառվում է միայն ռուսական շուկայում: Առաջարկում ենք գրավել նաև տեղական շուկան:

✓ ՀՀ-ում արտադրանքի պոտենցիալ գնորդներ կարող են հանդիսանալ ջերմոցային տնտեսությունները, որոնց թիվը գնալով աճում է:

✓ Առաջարկում ենք ստեղծել կայք, որը գնորդների համար կապահովի մաքսիմալ հարմարավետություն:

✓ Ջերմոցային տնտեսություններին անհրաժեշտ է ներկայացնել արտադրանքի կիրառման առավելություններն ու արդյունավետությունը, ինչը հնարավորություն կտա մուտք գործել Հայաստանի շուկա [6]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Котлер Ф.** Основы маркетинга. –М.: Прогресс, 1991.- 869 с.
2. **BioRuralHeating**, Բուսական թափոններից պելետների հիման վրա ջերմոցային տնտեսությունների ջեռուցման վերլուծություն.- Երևան, 2016.-15 էջ:
3. **ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն**, Ջերմոցային տնտեսություններ, Երևան, կառուցման, շահագործման և մշակության հիմունքներ.- 2015.- 124 էջ:
4. **Панкрухин А.П.** Маркетинг: Учебник.–М., 2005.-656с.
5. **Երեք ար ստրատեգիա ՍՊԸ**, ՀՀ-ում առկա ջերմոցային տնտեսությունների մասին հաշվետվություն.-Երևան, 2012.-194 էջ:
6. **Столмов Л. Ф.** Экономика торговли. –М.: Изд.-во “ Экономика ”, 1983.-231 с.

А.С. МАДОЯН, А.М. КАРАКЕШИШЯН

ИССЛЕДОВАНИЕ СПРОСА СИНХРОННЫХ ЭЛЕКТРОДВИГАТЕЛЕЙ, ПРОИЗВОДИМЫХ ОАО "АРДВИН" В ТЕПЛИЧНЫХ ХОЗЯЙСТВАХ РА

Проведено исследование спроса синхронных электродвигателей, производимых ОАО "Ардвин" в тепличных хозяйствах Армении, где они используются в системе вентиляции. В ходе исследования выявлен спрос на продукцию ОАО "Ардвин" и представлены методы внедрения на рынок.

Ключевые слова: синхронный электродвигатель, теплица, исследование рынка, 7P модель, спрос, цена.

A.S. MADOYAN, A.M. GHARAQESHISHYAN

INVESTIGATING THE DEMAND FOR SYNCHRONOUS ELECTRIC MOTORS PRODUCED BY JSC "ARDVIN" IN THE GREENHOUSE FARMS

The research of the demand for synchronous electric motors produced by JSC "Ardvin" in greenhouse farms of Armenia are used in the ventilation system is introduced. The demand for the OJSC "Ardvin" products was revealed during the research, and the methods of introduction to the market are presented.

Keywords: synchronous electric motor, greenhouse, market research, 7P model, demand, price.